

ՄԱՅԻՍԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Հայ ժողովուրդի պատմության կարեւորագույն իրադարձություններէն մէկն էր անկասկած 1918 Մայիս 28-ի անկախութեան հռչակագիրը, որ Եղեռնեան արձակագրութենէն ու վեց դարեայ խաւար ստրկութենէն ետք վերածուեցաւ յոյսի ու փրկութեան լուսաւոր նոր իրադարձութեան մը, անկախ Հայաստանի մը ստեղծումով, թէեւ կարճ շրջանի մը համար եւ մէկ տասներորդ իր պատմական հողամասին վրայ:

Արդարեւ, վեց հարիւր տարուան Օսմանեան լուծը Հայկական աշխարհին վրայ Հայ ժողովուրդի պետականութեան ու քաղաքական մտքի համար եղաւ ծանր ու կորստաբեր: Հայ ժողովուրդի արեւմտեան հատուածը բնաջնջուած էր օսմանցի թուրքին թուրանական ծրագիրներուն որպէս հետեւանք եւ փոքր հատուած մը միայն բնաջնջուած փրկուած ու ապաստանած արարական երկիրներ. իսկ արեւելեան մասը Յարական Խուսիոյ սահմաններէն ներս, Լեւինեան Յեղափոխութեան ու կայսրութեան փլուզման թուրքական զինուոր, կը դիմագրաւէր դէպի արեւելք արշաւող թուրանական նոյն ծրագրի շարունակութեան ստոյգ պատուհասը: Պահր ճակատագրական էր: Հայը կրկին անգամ կը կանգնէր մեծ պետութիւններու շահերու խաչմերուկին վրայ եւ առանձին կը դիմագրաւէր լինելու եւ չլինելու իր ճակատագիրը: Ահա այդ պայմաններուն մէջ ու թուրքին արշաւող բանակներուն դիմաց կը կանգնէր փոքրթիւ Հայկական զորամասերը Խուսիոյ կայսրութեան բանակին՝ կենաց ու մահու գոյութենական իր հաշուետուութեան դիմաց: Ծակատագրական այդ պահերուն եւ հակառակ Հայկական գունդերու անհամեմատ կարողութիւններուն պիտի մղուէին Սարդարապատի, Ղարաբաղի Իսիտի ու Բաջ Ապարանի հերոսական մարտերը ու աւարտէր հայկական գունդերու յաղթանակով. այդպէսով պիտի արձանագրուէր Հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան պայծառ էջերէն մէկը՝ Անկախութեան առաջին իրադարձութիւնը, Հայաստանի ու Հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան պահպանումը, Հայաստանի ամբողջութիւնը քաղաքական քարտէսի վրայ: 28 Մայիս 1918ին կը ստեղծուէր Հայաստանի առաջին Հանրապետութիւնը: Հայ ժողովուրդը կրկին անգամ կը փաստէր իր գոյատեւելու կամքը հակառակ ցեղասպանութեան, ահաւոր կորուստներու եւ զօրութիւն պարագաներու:

84 տարիներու յետագարձ ակնարկ մը, Խորհրդային Հայաստանի շրջանի, ապա 1991ի Հայաստանի կրկին անկախացման իրողութեան եւ ապա Ղարաբաղի ազատագրութեան ու անկախութեան հերոսական իրադարձութիւններուն վրայ, կը հաստատեն որ այդ իրադարձութիւններէն

որ, որքան ալ կարեւոր ըլլան անոնք, չեն կրնար չուրի մէջ ձգել Առաջին Հանրապետութեան քաղաքական ու ազգային խոր նշանակութիւնը: Եթէ եղաւ Խորհրդային Հայաստան եւ Հայ ժողովուրդը գոյատեւեց իր ներկայ սահմաններուն մէջ, եղաւ որովհետեւ կար Առաջին Հանրապետութիւնը եւ եթէ Խորհրդային Հայաստանը տիրացաւ անկախութեան, որովհետեւ Հայաստանը եւ հայութիւնը ճաշակած էին Առաջին Հանրապետութեան փորձը: Իսկ Սարդարապատեան պատերազանին վրայ եկան կանգնելու 1988 թուականի Ղարաբաղեան շարժման երեւանեան ցոյցերը եւ Հայաստանի ժողովուրդի անկախութեան պահանջը, հուսկ Ղարաբաղի գոյութեան ու անկախութեան տարերային պայքարն ու Ղարաբաղի ազատագրումը Ազգային շահերէն եւ երկու հանրապետութիւններու հռչակումը: Դէպքերու քաղաքական օղակաւորումը սերտօրէն աղերսուած են իրարու եւ իրարմով բացատրելի: Հայուն արեւմտեան մէջ կ'եռար ազատ ու անկախ ապրելու Հայկեան կամքն ու վճռակամութիւնը:

Եթէ Ապրիլ ամիսը եղաւ մեր պատմութեան ամենասեւ էջը՝ Եղեռնով ու 1,5 միլիոն հայութեան բնաջնջումով, ապա իրաւամբ Մայիսը եղաւ Հայ ժողովուրդի Յարուստեան եւ գոյատեւման ամենապայծառ էջը, որուն վրայ եկաւ աւելին արեւելեան ժողովուրդի նորագոյն սխրագործութիւնները եւ փանթուրեանական ծրագիրներու ձախողութիւնը: Անշուշտ կարելի չէ բաղդատական մը ընել Առաջին Հանրապետութեան եւ այսօրուան անկախ Հայաստանի պատկերին միջեւ իրենց առարկայական թէ ենթակայական բոլոր տարբերութիւններով, ոչ մէկ նպատակ ու իմաստ կայ նաեւ անոր մէջ. սակայն, երբ պատկերացնենք 19դ դարու վերջաւորութեան եւ 20րդ դարու սկիզբը հայ ժողովուրդի քաղաքական իրավիճակը եւ հայութեան թուաքանակի



դերու, ասպատակութիւններու, ներքին պառակտումներու, արտաքին քաղաքական ու մեծապետական այրացան ու իրերամերժ շահերու խաչածեւումներուն: Եւ եթէ կայ Սարդարապատեան յուշակոթող այսօր Հայաստանի մէջ, եթէ կայ Եռագոյն դրօշ, գինանշան ու անկախ պետական գոյութիւն այսօր, որովհետեւ հայ ժողովուրդը 1918ին միակամօրէն ու իր գոյութեան որպէս վճռական մարտահրաւէր վեր կանգնեցաւ որպէս մէկ ազգ ու մեզ իր գոյութեան ու գոյատեւման նորագոյն պատերազմը՝ նոր վարդահեղեղ գալիքի մը հաւատքով եւ բազմահազար նահատակներու թանկ արիւնով: Առանց Սարդարապատի իրողութեան կարելի չէ պատկերացնել նորագոյն փորձը՝ Ղարաբաղի ազատագրութեան ու անկախութեան համար մղուած պատերազմին իր 5 հազար երիտասարդ նահատակներու արեան գինով: Առանց Սարդարապատի իրողութեան կարելի չէր տեսնել Հայաստան մը այսօր հզոր բանակով եւ միջազգային քաղաքական կեանքին մէջ ու Ազգերու Լիկային ու Եւրոպական Խորհուրդի որպէս անդամ: Առանց Սարդարապատի թուրքերը իրագործած պիտի ըլլար իր Փանթուրեանական մեծ երազը՝ Եգէականէն մինչեւ Կեդրոնական Ասիա մէկ թրքացեղ ու թրքացեղ կայսրութիւնը իրագործուած տեսնելու երազը որ չի դադար իր մինչեւ մեր օրերը մնալ երազ ու նպատակ, վկայ այսօրուան կովկասեան իրադարձութիւնները եւ մեծ պետութիւններու շահերու խաչածեւումները: Առաջին Հանրապետութեան խորհուրդը որպէս պատմական ճշմարտութիւն եւ իրողութիւն կը մնայ ներշնչման, հպարտութեան ու խորհրդածութեան աղբիւր այսօրուան մեր իրականութեան մէջ: Այսօրը նուազ ճակատագրական չէ քան երէկը: Չարենցեան պատգամը կը մնայ լուսագոյն ուղեգիծ մեր այսօրուան ու գալիքի պայքարին: Սարդարապատեան յաղթանակի չեփօրը սերունդներ ամբողջ բոցավունց ու դաստիարակեց հայ ժողովուրդը՝ յաղթանակի երազով, Սփիւռքի ամենահեռուէն ափերուն, իսկ Մայիսեան յաղթանակի խորհուրդը՝ Տէր Զօր նահատակներէն ծնաւ նոր սերունդներ Արարատին ու վաղուան յաղթանակին հաւատացող:

Հայ ժողովուրդի պատմութեան ճակատագրական այս հանգրուանին կ'արժէ յետագարձ ակնարկով կրկին ու կրկին անգամ վերլուծել մեր պատմութեան գլխաւոր հանգրուանները եւ վեր բերել խորունկ դասերը այդ պատմութեան: Կ'արժէ նաեւ հաղորդել ու լինանայ այդ հանգրուաններուն հերոսական, գաղափարական ու ազգային բարձր գիտակցութեամբ, ի խնդիր մեր համազգային իղձերուն եւ նպատակներուն իրագործման: Սարդարապատի հերոսական դիմադրութեամբ նուաճուած 18 Մայիս 1918ի անկախութիւնը կը մնայ այդ կարեւոր հանգրուաններէն մէկը:

ԽԱՉԻԿ ՏԷՏԷԱՆ

30th Anniversary of "KOMITAS" Choir

Y . C o n c e p t
Presents

HAMAZKAYIN " BAROUYR SEVAG " BRANCH, ANJAR

KOMITAS

CHOIR

Barkev Taslakian
Art Director & Conductor

Under the patronage of his Excellency
Mr. Areg Hovhannissian
Ambassador Extraordinary and Plenipotentiary
of Armenia in Lebanon

Friday, May 31, 2002, at 8:30 pm
A.U.B. " Assembly Hall " - Beirut

Tickets: 20.000 lbp 15.000 lbp 10.000 lbp


For Free Delivery, please Call:
03 / 324 585 - 03 / 523 743 - 03 / 981 322
04 / 416 706 - 04 / 523 743 - 08 / 620 538

Sponsored by: **G.V.H. Computers**
CoSponsored by: **Nahl**, **Nammour Design Group**

Gemmy
The Fine Jewellery

Exclusively at BHV tel. 961 3 209361

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ՝ ՄԱՅԻՍ 28



Միատարր հաւաքականութիւններ, ժողովուրդներ եւ ազգեր դարձր շարունակ ձգտած են ապրիլ ազատ եւ ինքնիշխան հողային որոշ տարածքի մը վրայ, որ կը կոչուի հայրենիք: Ժողովուրդ կամ ազգ, հողային տարածք կամ հայրենիք, ինքնիշխանութիւն կամ ազատութիւն՝ կը կազմեն ամբողջութիւն մը եւ անոնք քաղաքական հասկացողութիւն եւ իրավիճակ: Հայրենիքը պէտք է ըլլայ անկախ եւ ունենայ պետականութիւն՝ ճանչցուած համայն աշխարհին կողմէ, իսկ ժողովուրդը պէտք է ըլլայ ազատ ու ինքնավար եւ իրաւունքը ունենայ ազատօրէն արտայայտուելու եւ գործելու իր հողին վրայ:

Ազատ ու անկախ հայրենիքի մէջ պետութիւնը պէտք է տէր կանգնի իր ժողովուրդին, հասնի անոր բոլոր պէտքերուն եւ ըլլայ արտայայտիչը անոր իղձերուն, պահանջներուն եւ իտե՛լաներուն: Պետութիւնը կը գործէ, կը գոյատեւէ ու կը յաջողի իր ժողովուրդին իւրաքանչիւր անհատին անվերապահ եւ ամբողջական գործակցութեամբ, աջակցութեամբ եւ վստահութեամբ: Ազատ եւ անկախ հայրենիք կը կերտուի միայն ու միայն ժողովուրդին վճռական որոշումով, անսահման գոհողութիւններով եւ քաղաքական հասունութեամբ: Ժողովուրդները իրենց անկախութեան կը տիրանան յարատեւ պայքարով: Անկախութիւնը երբեք չէ տրուած իբրեւ նուէր, այլ ան աւունւած է իբրեւ իրաւունք:

Հայ ժողովուրդն այլ իր ամբողջ պատմութեան ընթացքին ապրած եւ գոյատեւած է վերոյիշեալ հասկացողութեամբ: Ան շարունակ ձգտած է ունենալ անկախ հայրենիք եւ ըլլալ ազատ եւ ինքնիշխան: Իր ճակատագիրին տէրը ըլլալու համար հայ ազգը դարձր շարունակ պայքարած է կորովով, յամառօրէն եւ մեծ գոհողութիւններով:

Մինչեւ Ժ. դարու վերջերը հայր ունեցաւ իր անկախութիւնը եւ պետականութիւնը: Հայր ապրեցաւ ինքնիշխան, ունեցաւ իր քաղաքացիական իրաւունքները, վայելեց հայրենիքի մը բարիքները, յարգեց պետական օրէնքները եւ կատարեց իր պարտաւորութիւնները՝ իբրեւ հայրենիքի մէկ անդամ: Սակայն Ժ. դարուն հայութիւնը կորսնցուց իր անկախութիւնը եւ ազատութիւնը՝ ապրելով հանդերձ իր պայնակական հողին վրայ: Այնուհետեւ ան ապրեցաւ իբրեւ ստրուկ եւ 600 տարի կախեալ մնաց ուրիշներէ, որոնք եղան զաժան եւ անողոք: Այս 600 տարիներու ժամանակաշրջանը հայութեան արժեք շատ սուղ: Հայ ժողովուրդը կորսնցուց իր ազգային պետականութիւնը եւ անձնական ազատութիւնը: Ան հայածուցեալ, թայանուցեալ, իրաւազրկուցեալ, խռտանգուցեալ, սակայն երբեք չհաշտուցեալ իրեն պարտագրուած իրավիճակին, չհրաժարեցաւ իր թանկագին հողերէն: Իր ստրկութեան մէջ իսկ հայր գոյատեւեց ազատու-

թեան եւ անկախութեան իտե՛լով, որովհետեւ ան գիտէր ազատութեան արժէքը եւ կարեւորութիւնը:

1914ին թուրքը իրականացուց իր կանխամտածուած եւ նախապէս ծրագրուած հրէշային ոճիրը: Տեղի ունեցաւ Մեծ Եղեռնը: Հայր կորսնցուց իր զօրքը՝ հող, հարստութիւն, մշակոյթ եւ կեանք: Հայութիւնը դարձաւ գաղթական եւ ուղղուեցաւ դէպի արաբական անապատները: Իրականացաւ 20րդ դարու առաջին Յեղասպանութիւնը: Սակայն թուրքը կը կարծէր, որ կրնար վերջ տալ նաեւ փոքր Հայաստանին եւ ոչնչացնել վերջին հայր, սակայն հայ ժողովուրդը գիտակից իր ազգային ինքնորոշման իրաւունքին՝ իր բոլոր հատուածներով մարտնչեցաւ վճռակամութեամբ ու կորովով, արձանագրելով մեծ յաջողութիւններ:

Հերոսական կռիւներ եւ ճակատամեր տեղի կ'ունենան Սարդարապատի, Ղարաբաղի ճակատի եւ Բաշ Ապարանի մէջ: Թուրքերը մեծ վնասներ տարձր կը նահանջեն: Հայկական բանակը յաղթական դուրս կու գայ բոլոր ճակատներուն վրայ: Հայոց Ազգային Խորհուրդը Մայիս 28ին կը գումարէ ժողով մը, որուն ընթացքին կը քննէ ստեղծուած կացութիւնը եւ կ'որոշէ հռչակել Հայաստանի անկախութիւնը: Կը յայտարարուի Հայաստանի անկախութիւնը իր Եռագոյն դրօշով: Մայիս 28ին ծնունդ կ'առնէ Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը:

Ցովհաննէս Քալանթարը կ'ըլլայ նորահաստ Ազատ ու Անկախ Հայաստանի Հանրապետ-

ութեան առաջին վարչապետը: Շուտով կը կազմակերպուին բոլոր նախարարութիւնները եւ Հայաստան կը բաժնուի 10 գաւառներու: Անկախութեան հռչակումէն ետք, Յունիս 4ին, թուրքերը եւ հայերը կը ստորագրեն Պաթումի խաղաղութեան դաշինքը եւ Հայաստան կ'ունենայ 12 հազար քառակուսի քիլոմետր տարածութիւն: Օգոստոս 1ին կը բացուի առաջին Օրէնրսգիր ժողովը: 1919 Մայիս 28ին Հայաստանի կառավարութեան, խորհրդարանին եւ բոլոր կուսակցութիւններուն կողմէ կը յայտարարուի միացեալ Հայաստանի քաղաքական հանգանակը: Հայերէնը կը հռչակուի հանրապետութեան պաշտօնական լեզուն: Հայաստանը կը ճանչցուի դաշնակիցներու գերագոյն խորհուրդին կողմէ:

Տարի մը ետք, տեղի կ'ունենայ Սեւրի վեհաժողովը, ուր կը ստորագրուի ծանօթ դաշնագիրը՝ Աւետիս Ահարոնեանի կողմէ, 10 Օգոստոս 1920ին: Սեւրի դաշնագրով Հայաստան կը ճանչցուի իբրեւ անկախ հանրապետութիւն, որ պիտի ունենայ 161,330 քառ. քմ. տարածութիւն՝ Վանի, Պիթիւսի, Կարնոյ եւ Տրպաիզոնի վիլայեթներու վերադարձով:

Դժբախտաբար դէպքերը այլ ընթացք կ'ունենան 23 Սեպտեմբեր 1920ին: Թուրքերը կը յարձակին Հայաստանի վրայ: Մինչ այդ Ազգային հանրապետական կը խորհրդայնանայ: Հայաստան կ'անցնէ դժուարին օրեր, մինչեւ որ 2 Դեկտեմբեր 1920ին, Հայաստանի օրուան վարիչները «Թրքական մուրճի եւ ռուսական սալի» միջեւ տազնապահար՝ համաձայնութեամբ մը Հայաս-

տանը կը յանձնեն պոլլեիկներուն: 84 տարի ետք, այսօր, կարելի է անվարան ըսել, որ Մայիս 28 ազատագրեց հայ ժողովուրդը ստրկութենէ: Հայութիւնը դարձաւ ազատ ու անկախ, հայրենիքի տէր ու քաղաքացի: Մայիս 28 հայ ժողովուրդին պատմական մեծագործութիւնն է եւ հայ ժողովուրդին հաւաքական կամքին արտայայտութիւնը: Ան հայոց պատմութեան մեծագոյն եւ յատկանշական քաղաքական աքթն է:

Մայիս 28ով կերտուած Առաջին հանրապետութիւնը հիմնաքարն է հայ ժողովուրդին արդի պետականութեան:

Մայիս 28 դարձած է ազգային տօն: Ան հայ ժողովուրդին անորոշ ճիւղերուն եւ հերոսական պայքարին ցուցանիշն է, որ կը մարմնաւորէ հայ ժողովուրդին ազատութեան տենչը, կորովի կամքը, մարտական ոգին, ազգային պահանջատիրութիւնը, անկախութեան զաղափարը եւ միասնականութեան տենչը:

ՏՈՒՐԻ. ԿԱՐՊԻՍ ԸՄՊՈՑԵԱՆ

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ

ՄԱՅԻՍԵԱՆ ԱՐԵՒ

Ա. ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ

Սողոկեցաւ ժանտ ստուերը մահուան, Ամէն գաւառի հա՛յ օճախէն ներս: Ու խլեց անզամ հէգ սօր կուրծքին տակ, Դեռ նորափոթ գարունը մանկան:

Դարերը՝ ժողովուրդն զուն աշխարհալի Այդ յոգնած հողին վրայ մոխրացա՛ր: Բայց շաղախուելով հող, արին, մոխիր, քու ընթերքներէ՞ր մարտիկնէ՛ր ծնան:

Թորգոմեան գեղի շունչով տոչորուած, Մտոնց ջլապիւնդ, հրուտ աչքերէն, Եւ երակներէն վրէ՛ժ կը ժայթքէր:

Հրեղէն բանակ, լույսի՛ մարտիկներ, Այդ օր փշրեցիք շղթան դարերու, Որ դարձեալ՝ ճախրէ՛ արծիւը հայոց:

ԼԵՒՈՆ ԱՐՏԱԶԵԱՆ

The Revolutionary Japanese Air Conditioners



DYNAMIC made in Japan



I like it
Powerful
Ideal
Cool
DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons

Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357



igloo
54 U.S. Qt./51 L

Ets.
Avo Soulahian

CARANTIE
5
5 ANS - 5 ANS - 5 ANS

Made in the USA

Exclusive Agent Ets. Avo Soulahian Tel: 01 - 691526

ՎՏԱՆԳԱԿՈՐ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ...

Շարունակում՝ 7րդ էջէն

Կը պարունակէ յատուկ փորձէիներ: Բժիշկները կը յուսան, որ անոնք պիտի կանխարգիլեն զարգացումը յիշողութեան եւ տրամաբանութեան կապուած բնութեան, որոնք Ալցայմըրի հիւանդութեան պարագային կը փնտրեն:

Սան Տիեկոյի Բալիֆորնիա համալսարանին մասնագետներէն Մարք Թուսիցըն, որ մշակած է նշալ միջոցը, կ'ըսէ, թէ ասիկա կատարելաբար բուժում չէ, բայց ան միայն կը կասեցնէ հիւանդութեան զարգացումը:

11 ժամ տեսողութեամբ վիրաբուժութեան ընթացքին Քրոստալթ արբուց մնացած է: Վիրաբուժները երկար ասեղներ մտցուցած են անոր ուղեղին մէջ, ինչ որ կընար արինահետութեան դուր բանալ: Կար նաեւ այն կարելիութիւնը, թէ ասեղնուած հիւսկէնը կընար ուռ, ցաւ կամ նոյնիսկ ծանրութեան նուազում պատճառով, եթէ ճշգրիտ գոտիին չհասնէր անիկա:

Վիրաբուժութեան ամիս մը ետք Քրոստալթ, որ չափազանց գործօն կեանք մը ունեցած է, կըրցած է չմշկել:

ԵՆԵՏԸ ՔԵՇՉԿԵՆ...

Շարունակում՝ 4րդ էջէն

ամէն կարելիութիւններով, ամէն իրականացումները Հայութեան ամէնէն աւելի փայտաշատ երազներուն եւ բարձրագոյններուն:

Ասիկա յիշեցի այս տարի երեւան, գարնան իրիկուն մը, երբ որ Հայկական ամբողջ գունդ մը, Հայ դրօշակները պարզած, կ'անցնէր գլխաւոր Հրապարակէն ու կը փութար դէպի մօտակայ գործողները: Պատերազմի դաշտէն յաղթական դարձող զինուորներ էին ասոնք, քրտնաթոր, փռչող ծածկուած, կուռի ամբողջ սարկղովը, երաժշտական պղինձներուն մարտադուր երգին ընկերակցութեամբ: Երբ զինուորները, Անկախ Հայաստանի զինուորները, որ Հրով եւ սրով ստեղծելու վրայ էին մեր Հայրենիքը, որ իրականացնելու վրայ էին Հայութեան Յոյսերը՝ իրենց լուծեմամբ:

ONE SECOND IS ENOUGH...

Արագը կը Պատահէ Երկարութեան Մը Մէջ...



...BUT WE USE THEM ALL.

...ԻՍԿ ՄԵՆՔ ՆԵՐԿԱՅ ԵՆՔ ԱՄԵՆ ԵՐԿԱՅՐԿԱՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Աֆտիլ Ենք, Բ. Յարկ, 760. եւ Շարք. (01) 262231-242556-242557

50% ՁԵՂՉ - ՎԱՃԱՌԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱՋԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ

TANIA TRAVEL CHARTERS PALMA DE MALLORCA ESPAGNE, PORTUGAL & MAROC RHODES MYKONOS

ԼՕՍԻ ԵՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ

ՍԱԿԱՐԱՆ Պէջրութի սակարանին մէջ օտար դրամ - Գիշերու փակման սակագինները հետեւեալներն էին երկ.

ՆՈՒՆԻ ԿՐԱԿԱՆ ԱՍՏՂԵՐԸ

Նոյն ժամանակահատվածում 20 Ապրիլի

Նոյն ժամանակահատվածում 21 Մայիսի

Նոյն ժամանակահատվածում 22 Մայիսի 21 Յունիսի

Նոյն ժամանակահատվածում 23 Յունիսի 23 Յուլիսի

Նոյն ժամանակահատվածում 24 Յուլիսի 23 Օգոստոսի

Նոյն ժամանակահատվածում 25 Օգոստոսի 23 Սեպտեմբերի

Նոյն ժամանակահատվածում 26 Սեպտեմբերի 23 Նոյեմբերի

Նոյն ժամանակահատվածում 27 Նոյեմբերի 21 Դեկտեմբերի

Նոյն ժամանակահատվածում 28 Դեկտեմբերի 20 Յունուարի

Նոյն ժամանակահատվածում 29 Յունուարի 21 Փետրուարի

Նոյն ժամանակահատվածում 30 Փետրուարի 20 Մարտի

ՕՐԱՍՏԵՏՐ ՇՆՈՒՏԵՍԻԼ Panasonic

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5156 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

